

Հորպորատիվ սոցիալական
պատասխանատվության
տարեկան հաշվետվություն

2019

Բովանդակություն

Ներածություն	4
Ֆինանսական և գործառնական կայունություն	5
Իրավաբանական գործունեություն	5
Ծառայություններ և առաջարկներ	6
Տեխնիկական առաջխաղացում	9
Միջօպերատորական համագործակցություն	10
Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում	10
Թվային ծառայություններ	11
Հաճախորդների սպասարկում	12
Հաճախորդների հետ հետադարձ կապ	12
Կոմպլաենս և էթիկա	13
Հնարավորություններ աշխատակիցների համար	13
Կորպորատիվ պատասխանատվություն	16



Ուղերձ գլխավոր տնօրենից

Պատասխանատու ընկերություններն, ինչպես և պատասխանատու մարդիկ, ոչ միայն պլանավորում են իրենց անելիքները, այլև պարբերաբար ամփոփում են իրենց հաջողություններն ու ձեռքբերումները: Սա շատ կարևոր է մեր անցած ուղին գնահատելու և հասարակության ու երկրի կյանքում մեր տեղը գտնելու համար: Կարծում եմ, այս հաշվետվությունն լավ ապացույց կլինի այն բանի, որ Beeline-ը Հայաստանի Հանրապետության արժանապատիվ քաղաքացի է և «ՎԵՈՆ» միջազգային ընտանիքի արժանի անդամ: Վստահ եմք, որ մեր բաժանորդներն ու գործընկերները նույնպես իրենց ամենօրյա կյանքում և աշխատանքի մեջ զգում են մեր աճն ու անդադար ջանքերը՝ զարգանալու և առաջ շարժվելու:



Ներածություն

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն Հայաստանի խոշորագույն կապի օպերատորներից է, որը Beeline ապրանքանիշի ներքո մատուցում է կապի ծառայություններ Հայաստանի ողջ տարածքում 2008 թ-ից:

Beeline-ը տրամադրում է GSM 900/1800, 3G (UMTS) և 4G (LTE) ստանդարտ շարժական կապի, ամրակցված հեռախոսակապի ծառայություններ, ինչպես նաև ապահովում է ինտերնետ հասանելիություն CDMA, ADSL, FTTB և VDSL տեխնոլոգիաներով:

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն պատկանում է «ՎԵՈՆ» ընկերությունների խմբին (գլխամասային գրասենյակն Ամստերդամում): «ՎԵՈՆ» խումբը աշխարհի խոշորագույն ինտեգրված օպերատորներից մեկն է: Այն շրջանառվում է NASDAQ և Euronext Amsterdam բորսաներում և ընդգրկում է մի շարք հեռահաղորդակցության ընկերություններ, որոնք մատուցում են ձայնային կապի ու տվյալների հաղորդման, ինչպես նաև լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ ավելի քան 212 մլն բաժանորդների ամբողջ աշխարհում:

Մանրամասներին կարելի է ծանոթանալ www.veon.com կայքում:



Ֆինանսական և գործառնական կայունություն

Հայաստանում Beeline-ի ֆինանսական տնօրենությունը պատասխանատու է ոչ միայն ընկերության ֆինանսական ցուցանիշների համար, այլ նաև գրասենյակների աշխատանքի կազմակերպման և տեխնիկական ապահովման: Ներկայացնում ենք այս ուղղությամբ 2019 թ-ի որոշ ձեռքբերումներ:

2019 թ-ին «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն վճարել է 12 271 337 045 դրամի չափով գումար, որը ներառում է պետական և տեղական բյուջեներ վճարած հարկեր, ինչպես նաև տուրքեր և այլ վճարներ:

Վարչական գրասենյակի բոլոր 560 աշխատակիցներն արդեն աշխատում են Ազատություն 24/7 հասցեում գործող Open Space (Բաց տարածք) Նոր, ընդարձակ և ժամանակակից գրասենյակներում: Էկոլոգիական նկատառումներից ելնելով ընկերությունը մշտապես թղթային թափոններ է ուղարկում վերամշակման: Այժմ նաև էլեկտրոնային

փաստաթղթային շրջանառության շնորհիվ թափոնների քանակը գրեթե կրկնակի կրճատվել է, հասնելով 2,5 տոննայի տարեկան:

**Հետաքրքիր վիճակագրություն՝
1 տոննա թուղթ ստանալու համար
գործածվում է միջինը 2 տոննա
փայտանյութ, որը հավասար է 17
ծառի, և թուղթը վերամշակման
ուղարկելով, փրկում ենք ծառեր:**




Իրավաբանական գործունեություն

2019 թ. ընթացքում ակտիվ գործունեություն է ծավալել նաև Հայաստանում Beeline-ի իրավաբանական թիմը: Մեր մասնագետները մասնակցել են ոչ միայն կորպորատիվ գործընթացներին, այլև պետական և միջպետական տարբեր մարմինների հետ աշխատանքներին, մասնավորապես՝

ԵԱՏՄ հանձնաժողովի աշխատանքային խմբի շրջանակում բանակցություններ են տարվել միության տարածքում բոլոր կողմերի համար ռոումինգ ծառայության շահավետ սակագներ հաստատելու շուրջ:

Երկու տարով երկարաձգել համարների օգտագործման ժամկետը՝ մինչև ընկերության ֆիքսված ցանցի արդիականացման աշխատանքների ավարտը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ, ընկերությունը պարտավոր էր մինչև 2020 թվականի հունվարի 1-ը Կարգավորողին հանձնել տեխնիկական և մարքեթինգային նպատակներով օգտագործվող 8xxx քառանիշ հեռախոսահամարները: Սակայն բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ևս



Ծառայություններ և առաջարկներ

Իր բաժանորդների համար Beeline-ը մշտապես շարունակում է զարգացնել թե՛ իր ծառայությունները, թե՛ սպասարկման որակը: Այս ոլորտում 2019 թ-ին աշխատանքները տարվել են մի շարք ուղղություններով:

Beeline-ի ֆիքսված և կոնվերգենտ ծառայությունների տեսակետից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- 1 COMBO ծառայությունների փաթեթերում ֆիքսված ինտերնետի արագությունների օպտիմալացում՝ բարձր արագությունները դարձնելով ավելի հասանելի և մատչելի գնային առաջարկների տեսակետից:
- 2 Ֆիքսված ինտերնետ ցանցի մեծածավալ վերազինում Երևան քաղաքում՝ հասանելի դարձնելով 100 Մբ/վրկ գերաբազ ինտերնետը Երևանի տնային տնտեսությունների 80%-ից ավելի համար:
- 3 Ֆիքսված ինտերնետի օգտատերերի միացման բարելավված գործընթաց և արագ սպասարկում Beeline գրասենյակներում՝ կոնվերգենտ փաթեթերի առանձնացված մասնագետների ներդրման շնորհիվ:
- 4 Ֆիքսված ծառայություններին միանալու պարզեցված գործընթաց՝ վճարային տերմինալներով միացման հայտ ուղարկելու միջոցով:
- 5 Միանվագ Cashback-ի տրամադրում՝ COMBO ծառայությունների փաթեթի նոր օգտատերերի միացումը խրախուսելու նպատակով:
- 6 BeeTV հեռուստատեսությունը դիտելու հնարավորությունների ընդլայնում բաժանորդներին հավելյալ TV ընդունիչ տրամադրելու միջոցով:
- 7 COMBO «4-ը 1-ում» կես գին առաջարկ՝ վերազինված ֆիքսված ինտերնետ ցանցից հատուկ պայմաններով օգտվելու հնարավորություն ընձեռելու համար:
- 8 Մինչև երեք անգամ շատ անվճար բջջային ինտերնետ ծավալի ամսական տրամադրում COMBO օգտատերերին:
- 9 Ամանորյա առաջարկ՝ 100 Մբ/վրկ ֆիքսված ինտերնետի տրամադրում բոլոր COMBO փաթեթերին միանալիս՝ օգտատերերին ֆիքսված ինտերնետ ցանցի մաքսիմալ հնարավորություններից օգտվելու հնարավորություն ընձեռելու համար:
- 10 Բոնուսային համակարգի ներդրում, որը հնարավորություն է տալիս Beeline օգտատերերին կուտակել միավորներ կապի ծառայություններից օգտվելու համար և փոխանակել դրանք հավելյալ բջջային ներառումների և հատուկ առաջարկների հետ:



2019 թ-ի ընթացքում Beeline-ի հաճախորդներն օգտվել են զանազան ակցիաներից, ստանալով ժամանակակից ծառայությունները ու սմարթֆոնները հասանելի գներով: Մասնավորապես՝

Սմարթֆոններ

Գարնանային ակցիայի շրջանակներում հայտարարեցինք Xiaomi-ամսյակ՝ բաժանորդներին առաջարկելով Xiaomi Redmi 6 A սմարթֆոն և տրամադրելով 50 GB ինտերնետ 6 ամսով: Սմարթֆոնը հնարավոր էր ձեռք բերել՝ ամսական վճարելով ընդամենը 2200 դրամ:



Ամառային ակցիայի շրջանակներում բաժանորդներին առաջարկել ենք Samsung-ի նոր Galaxy A սերիայի սմարթֆոնները, որը գնելու դեպքում բաժանորդին տրամադրվել է 033 կոդով հատուկ համար:

Գիտելիքի օրվան նվիրված արդեն ավանդական դարձած հատուկ առաջարկի շրջանակում մեր բաժանորդները հնարավորություն են ունեցել գնելու Samsung Galaxy A10 սմարթֆոնը՝ առանց կանխավճարի և տոկոսների վճարման առաջին 12 ամսվա ընթացքում՝ միաժամանակ նվեր

ստանալով 100 ԳԲ ինտերնետ 2 ամսով: Տվյալ ակցիայի շրջանակում նշված սմարթֆոնը հնարավոր էր ձեռք բերել ամսական 3300 դրամով:


Ինչպես նաև 2019 թ-ի ընթացքում պարբերաբար անցկացրել ենք հատուկ ակցիաներ iPhone հեռախոսների համար՝ առաջարկելով 25 ԳԲ ինտերնետ 30 օրով և մինչև 30 000 դրամ նվեր հաշվին: Իսկ տարին եզրափակող Ամանորյա ակցիայի շրջանակում ներկայացրինք Samsung Galaxy A30S սմարթֆոնը, որը գնելու դեպքում բաժանորդին տրամադրվում էր 100 ԳԲ ինտերնետ 2 ամսով: Առաջարկը հասանելի էր բաժանորդներին ամսական 4660 դրամով:

SAMSUNG Galaxy A30s



033 կոդ

2019 թ-ի մայիսին հայտարարեցինք Նոր 033 կոդով հեռախոսահամարների վաճառքի մեկնարկը: Մեկնարկն ազդարարվեց առցանց աճուրդով, և պրեմիում դասի հեռախոսահամարների վերջնական գները ձևավորվեցին հենց աճուրդի մասնակիցների կողմից: Այնուհետև վաճառքի հանվեց ևս 1000 Նոր հեռախոսահամարներ, որոնք հնարավոր էր նաև ձեռք բերել «Սմարթ» սակագնային փաթեթներին բաժանորդագրվելիս:



«Սմարթ» փաթեթներ

Էքսկլյուզիվ առաջարկ արեցինք «Սմարթ» փաթեթների մեր բոլոր բաժանորդներին. 2019 թ-ի փետրվարից կանխավճարային բաժանորդների համար չօգտագործված ինտերնետի ծավալները փոխանցվում են հաջորդ ամիս: Հիշեցնենք, որ հետվճարային բաժանորդների համար այդ հնարավորությունը հասանելի է եղել դեռևս 2016 թ-ից:

Իսկ 2019 թ-ի մայիսից «Սմարթ» փաթեթների բոլոր բաժանորդները սկսեցին ստանալ ավելի շատ ինտերնետ՝ օրինակ «Սմարթ 1500» փաթեթի շրջանակում բաժանորդներին

տրամադրվում է 3ԳԲ ինտերնետ, նախկին 1,5 ԳԲ-ի փոխարեն:



Ինտերնետ

Հետևելով շուկայի պահանջին՝ շարունակել ենք ինտերնետի ծավալների մեծացման քաղաքականությունը: Եվ 2019 թ-ի հուլիսին մեծացան նաև «Giga» ինտերնետ ծառայության շրջանակում տրամադրվող փաթեթների ծավալները: Այժմ «Giga 6» փաթեթի փոխարեն, մեր բաժանորդները կարող են Նույն 3500 դրամով ձեռք բերել «Giga 10» փաթեթ՝ 6 ԳԲ-ի փոխարեն համապատասխանաբար ստանալով 10 ԳԲ:

2019 թ-ի հունիսից գործարկեցինք ևս մի եզակի նախագիծ՝ Հայաստան այցելող զբոսաշրջիկներին առաջարկելով փոխառությամբ ձեռք բերել 4G Wi-Fi մոդեմ և օգտվել բարձրորակ ինտերնետից ողջ շրջագայության ընթացքում:



Ռոումինգ

Արտերկիր ճամփորդող մեր հայրենակիցների համար ամբողջությամբ վերանայել ենք ռոումինգում տրամադրվող ծառայությունների սակագները՝ դարձնելով դրանք հնարավորինս մատչելի ավելի քան 65 երկրում: Այսպիսով Վրաստանում, Ռուսաստանում, Եվրոպայի բոլոր երկրներում, ինչպես նաև Եգիպտոսում, Իսրայելում, ԱՄՆ-ում, Թայլանդում և մի շարք այլ երկրներում Beeline-ի բաժանորդները ողջ ամռան և սեպտեմբեր ամսվա ընթացքում օգտվել են ինտերնետից սկսած 5,9 դրամ



աննախադեպ սակագնից: Կարևոր է նշել, որ սակագները գործել են բոլոր օպերատորների ցանցերում առանց հատուկ ծառայությունների ակտիվացման: Վրաստանի, Ռուսաստանի Beeline ցանցում, ինչպես նաև Իտալիայի Wind ցանցում և Ուկրաինայի Kyivstar ցանցում բաժանորդները 2019 թ-ի հունիսից կարող են ստանալ և զանգեր կատարել դեպի Հայաստանի Beeline ցանց ընդամենը 29,99 դրամով, իսկ աշխարհի ավելի քան 65 երկրում՝ անկախ օպերատորից զանգեր ստանալու և դեպի Հայաստան զանգեր կատարելու սակագինն է 150 դրամ:

Հաջորդելով ամառային առաջարկին՝ Ռոումինգում ինտերնետի մեծ

ծավալներից օգտվող բաժանորդների համար դեկտեմբերից մեկնարկել ենք Նոր և հարմարավետ Ռոումինգ Ինտերնետ փաթեթներ՝ «Ռոումինգ փաթեթ 500 ՄԲ» և «Ռոումինգ փաթեթ 1000 ՄԲ» 3500 և 6000 դրամ արժողությամբ: Փաթեթների շրջանակում բաժանորդները կարող են ինտերնետից օգտվել 1ՄԲ 6 դրամից սկսած: Փաթեթները ևս գործում են վերը նշված բոլոր երկրներում և բոլոր օպերատորների ցանցերում:

Beeline Bonus

Որպես Ամանորյա նվեր Beeline-ն իր բաժանորդների համար մեկնարկեց Նորացված պայմաններով Beeline Bonus ծրագիրը, որի շրջանակներում բաժանորդները կուտակում են միավորներ բջջային կապի ծառայությունների համար ծախսված յուրաքանչյուր 10 դրամի դիմաց և փոխանակում դրանք տարբեր բոնուսային առաջարկներով:

Բաժանորդները կարող են ծրագրում գրանցվել «My Beeline Armenia» հավելվածի «Բոնուս» բաժնում կամ www.beeline.am կայքից «Անձնական գրասենյակի» միջոցով և ինքնուրույն կառավարել իրենց բոնուսային հաշիվը: Գրանցվելիս բաժանորդները ստանում են նաև լրացուցիչ բոնուսային միավորներ: Նոր ծրագրում բաժանորդներին տրամադրվում է կարգավիճակ՝ Standard, Silver, Gold կամ Platinum վերջին 6 ամսվա կատարված ծախսերի համաձայն և միավորների կուտակումը իրականացվում է համաձայն այդ կարգավիճակի համար սահմանված գործակցի. 1-ից մինչև 1,7 միավոր:

Կորպորատիվ հաճախորդների համար նույնպես կատարվել են մի շարք բարելավումներ՝

1 Փետրվարին կորպորատիվ հաճախորդների համար գործարկել ենք Նոր «Սմարթ Բիզնես» սակագնային փաթեթը: Առաջարկը թույլ է տալիս հաճախորդին ինքնուրույն կարգավորել սեփական փաթեթը՝ ելնելով իր բիզնեսի պահանջներից և առանձնահատկություններից: Նոր առաջարկը հնարավորություն է տալիս հատուկ հավելյալ փաթեթներով թե՛ միջազգային զանգեր կատարելու, թե՛ բջջային հավելվածներից առանց ինտերնետի տարիֆիկացման օգտվելու համար:



Ընտրությունը Ձերն է

Կորպորատիվ «Սմարթ» սակագնային փաթեթը Ձեր բիզնեսի համար

2 Մայիսին գործարկել ենք կորպորատիվ հաճախորդների համար նախատեսված առաջին կոնվերգենտ փաթեթները: Առաջարկը գործում է vPBX (Վիրտուալ ԱՀԿ) ծառայության հետ մեկտեղ: Դառնալով vPBX ծառայության Նոր սակագնային փաթեթների բաժանորդ՝ հաճախորդները կարող են մեկ փաթեթով միացնել Beeline-ի ֆիքսված ձայնային կապի (ոչ աշխարհագրական կոդով) և ինտերնետի ծառայությունները և դրանց համար վճարել մեկ հաշվով ու ավելի շահավետ գնով:

3 Ֆիքսված կապի մոդերնիզացիայից զերծ չմնացին նաև մեր կորպորատիվ հաճախորդները, և մայիսի 20-ին

գործարկեցինք VDSL տեխնոլոգիայով գերարագ ֆիքսված ինտերնետին միացման ակցիա, որը նախատեսված էր միայն իրավաբանական անձանց համար և տևել է մինչև 2019 թ. դեկտեմբերի 31-ը: Ակցիայի շրջանակում կորպորատիվ հաճախորդները կարող են միանալ Beeline-ի VDSL ինտերնետին՝ 15, 30 և 90 Մբ/վրկ. արագությամբ, իսկ ամսական բաժանորդավճարը կազմում է համապատասխանաբար 6000, 9000 և 15000 դրամ: Ծառայությունը ներառում է շուրջօրյա տեխնիկական սպասարկում:

4 Հուլիսին իրավաբանական անձանց համար գործարկել ենք ֆիքսված հեռախոսակապի երեք Նոր սակագնային փաթեթ: Հետվճարային սակագնային փաթեթների թարմացված տեսականին բիզնեսին առաջարկում է ներառված խոսելաժամանակ, որը կարելի է օգտագործել Հայաստանի, Արցախի, ԱՄՆ-ի, Կանադայի և Չինաստանի բոլոր ֆիքսված և բջջային ցանցերին, ինչպես նաև Ռուսաստանի Beeline ցանցի հեռախոսահամարներին զանգահարելու համար:



Բիզնես փաթեթ

Մեկ ինչ անկողնուց է Ձեր բիզնեսի համար

Նոր շարքի սկզբնական սակագնային փաթեթն է «Բիզնես 4900» այլընտրանքայինը, որն ամսական 4900 դրամի դիմաց բաժանորդին տրամադրում է 450 րոպե ներառված խոսելաժամանակ և անսահմանափակ զանգեր «փակ խմբի» ներսում: Առաջատար «Բիզնես 9900» այլընտրանքային փաթեթը ներառում է ամսական 1100 րոպե խոսելաժամանակ:

5 Սեպտեմբերին գործարկել ենք Facebook սոցիալական ցանցում Նոր առանձին էջ մեր կորպորատիվ հաճախորդների համար: Beeline Business էջն օգտակար է ոչ միայն գործող կորպորատիվ հաճախորդներին, այլ նաև կորպորատիվ սեզմենտի առաջարկներով հետաքրքրվող անձանց համար:



Beeline Business

Beeline Business էջի բացման նպատակն է կորպորատիվ հաճախորդներին տեղեկացնել Նոր ծառայությունների և առաջարկների մասին, կիսվել փորձով և կապ պահպանել վերջիններիս հետ: Էջը նաև թույլ է տալիս Նոր հաճախորդներին արագ ծանոթանալու բիզնես Նոր առաջարկներին:

6 Դեկտեմբերին գործարկել ենք Նոր հետվճարային «Business» սակագնային փաթեթները: Շարքը կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է փաթեթում ներառված խոսելաժամանակ ՀՀ և Ռուսաստանի Beeline ցանցի հեռախոսահամարներին զանգահարելու համար, թույլենք դեպի ՀՀ և ՌԴ այլ ցանցեր, Արցախի, ԱՄՆ-ի, Կանադայի բոլոր ֆիքսված և բջջային ցանցեր, կարճ հաղորդագրություններ և ինտերնետ: Ներառում է 5 առաջարկ՝ 2000 դրամից մինչև 9000 դրամ ամսավճարով:

7 Դեկտեմբերին հայտարարել ենք «Սմարթ Բիզնես All Net» հետվճարային փաթեթների շարքի բարելավման մասին: Կորպորատիվ հաճախորդների համար նախատեսված փաթեթները վերանվանվել են «PRO»՝ PROգրեսիվ, PROդուկտիվ և PROֆեսիոնալ բիզնեսի համար: Փաթեթները հնարավորություն տվեցին հաճախորդներին ստանալ ավելի շատ ինտերնետ, թույլենք և



PRO

Սակագնային փաթեթ

անսահմանափակ չփոփոխվող հաշվառումներով

ավելի շատ թույլներ

ավելի շատ ԳԲ

PROգրեսիվ | PROդուկտիվ | PROֆեսիոնալ

հաղորդագրություններ նույն ամսավճարի դիմաց: Օրինակ՝ 5200 դրամ արժողությամբ «PRO 3» փաթեթը տրամադրում է 1300 ռոպե դեպի ՌԴ (Beeline) և ՀՀ, ԼՂՀ, ԱՄՆ ու Կանադայի բոլոր ցանցեր, 1300 SMS հաղորդագրություն և 20 ԳԲ գերարագ ինտերնետ նախկին 1200 ռոպեների, 200 հաղորդագրությունների և 7 ԳԲ ինտերնետի փոխարեն, ինչպես նաև, 10000 ռոպե դեպի Beeline բջջային ցանց՝ ներառված ռոպեների սպառումից հետո:

«PRO» փաթեթների բաժանորդները WhatsApp, Facebook, Messenger, Zangi, Telegram բջջային հավելվածներից օգտվում են անսահմանափակ՝ առանց ինտերնետի տարիֆիկացման:



«Այս տարին բացառիկ էր կորպորատիվ հաճախորդների սպասարկման բարելավման առումով: Վստահաբար կարող ենք ասել, որ նոր ծառայություններն ու հնարավորությունները, որոնք մենք ստեղծել ենք մեր սիրելի հաճախորդների համար էլ ավելի պարզ և հարմար են օգտագործման համար»

Հայաստանում Beeline-ի գլխավոր տնօրեն
Անդրեյ Պյատախին

Տեխնիկական առաջխաղացում

Կայուն զարգացման գլխավոր գրավականներից է մշտական տեխնիկական զարգացումը: 2019-ի ընթացքում էլ կատարվել են բազմաթիվ տեխնիկական նախաձեռնություններ, այդ թվում հետևյալները.

- 2019 թ. ընթացքում Հայաստանում Beeline-ը ներդրեց FTTC/VDSL տեխնոլոգիան Երևանի Կենտրոն, Ջրվեժ և Վարդաշեն համայնքներում: Սա նշանակում է, որ մինչև 100 ՄԲ արագության ինտերնետ կապը հասանելի դարձավ Հայաստանի շուրջ 67 000 բնակչի համար:
- 2019 թ. ընդլայնվել է Beeline-ի 3G ցանցը. կառուցվել է 68 նոր բազային կայան: Այժմ Հայաստանի բնակչության ավելի քան 87% կարող է օգտվել 3G բջջային կապի հնարավորություններից:
- 2019 թ. LTE ցանց է գործարկվել Երևանում և մարզերում: Ներկա պահին ժամանակակից բջջային ցանցը հասանելի է Երևանում, Սյունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Տավուշի, Արարատի և Արմավիրի մարզերում: Հայաստանի բնակչության ավելի քան 57% կարող է օգտվել LTE բջջային կապի հնարավորություններից:
- FTTB տեխնոլոգիայով ծառայությունների տրամադրումը ապահովվել է Երևանի ևս 3 համայնքներում՝ Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր, Մալաթիա-Սեբաստիա:
- Երզնկա, Մուղնի, Վաղատուր, Խոզնավար համայնքներում ներդրվել է ADSL տեխնոլոգիա, որի շնորհիվ

բնակիչներին հասանելի են դարձել լայնաշերտ ինտերնետի ծառայությունները:

- Մարտունիում, Վանաձորում, Կոթիում և Աշոցքում ցանցային հանգույցների արդիականացում է իրականացվել:

Մտահոգվելով շրջակա միջավայրի վիճակով, Հայաստանում Beeline-ը ոչ միայն տեղադրել է բոլոր գրասենյակներում էներգիա խնայող LED լույսեր, այլև գործարկել է արևային վահանակներ Երևանի Աջափնյակ, Հարավ-արևմտյան և Շենգավիթ թաղամասերի ավտոմատ հեռախոսային երեք կայաններում: Յուրաքանչյուր կայան կգործի առնվազն 20 տարի և տարեկան կարտադրի շուրջ 26,000-27,000 ԿՎտ*ժ էլեկտրաէներգիա, որը որևէ վնաս չի հասցնի բնությանը:



Միջօպերատորական համագործակցություն

Ներքին ցանցը զարգացնելով մեկտեղ՝ Beeline-ը չի մոռանում և միջօպերատորական համագործակցության մասին: Անցած տարվա կարևոր ձեռքբերումներից են.

Իրականացվել են Facebook և Akamai ընկերությունների հետ ռեսուրսների տեղայնացման/քեշավորման նախագծեր, որոնց շնորհիվ հասանելիությունը տվյալ ինտերնետ ռեսուրսներին մեր բաժանորդների համար արագացել է 8-ից մինչև 40 անգամ և չէ տարածքից դուրս գնացող ինտերնետ տրաֆիկի ծավալները նվազել են 31,1%-ով (Facebook-27,8%, Akamai- 3,3%):



Ընդլայնվել է մեր համագործակցությունը միջազգային գործընկերների հետ տարբեր աշխարհաքաղաքական ուղղություններով, որի շնորհիվ ավելի որակյալ և մատչելի ինտերնետ և միջազգային ձայնային ծառայություններ են առաջարկվում բաժանորդներին:

2019 թ-ին՝ նախորդ տարվա համեմատ 23%-ով ավելացել է ընկերության 4G օպերատոր գործընկերների քանակը և 4-րդ սերնդի կապը հասանելի է դարձել 77 երկրում 67-ի փոխարեն: Այսուհետ 4G կապը Beeline բաժանորդների համար հասանելի է Ալբանիայում, Պորտուգալիայում, Մեքսիկայում, Նորվեգիայում, Մեծ Բրիտանիայում, Դանիայում, Ֆինլանդիայում, Լատվիայում,

Լիտվայում, Հունգարիայում, Շրի Լանկայում, Քովեյթում և Նոր Զելանդիայում:

2019 թվականի ընթացքում գրանցվել և կանխվել է 17 DDoS հարձակում չէ սահմանին, ինչի շնորհիվ բաժանորդները որևէ խնդիր չեն ունեցել: Համացանցի անվտանգությանը մեծ ուշադրություն ենք դարձնում հատկապես տոն և հիշատակման օրերին:



Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում

Հայաստանում Beeline-ը նաև խոշոր SS ընկերություն է և՛ տրամադրելով ինտերնետ հասանելիություն, մշտապես զարգացնում է այս ոլորտում հաճախորդների սպասարկման որակը, անձնական տվյալների պաշտպանությունը և ընկերության ներսում աշխատանքի կազմակերպման համար կիրառվող տեխնոլոգիաները: 2019 թ. ընթացքում արվել են հետևյալ աշխատանքները.

ID-սքաներ

Նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ հաճախորդների սպասարկումն արագացնելու համար ընկերության վաճառքի և սպասարկման գրասենյակներում ներդրվել է ID-սքաներ ծրագիրը: Այն թույլ է տալիս աշխատակցին հեռախոսի միջոցով սկանավորել հաճախորդի անձնագիրը, ինչից հետո այն անմիջապես հայտնվում է ընկերության համակարգում, առանց լրացուցիչ գործողություններ կատարելու անհրաժեշտության: Սա բարձրացնում է սպասարկման արագությունը և տեղեկությունների պահպանման անվտանգությունը, ինչպես նաև բացառում է տեղեկության սխալ ներմուծման հնարավորությունը: Ծրագիրն երաշխավորում է բաժանորդների տվյալների ապահովությունը և անվտանգությունը:

Աշխարհագրական վայրին

համապատասխան տեղեկատվության տրամադրում

Նորագույն տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ ըստ հաճախորդի գտնվելու վայրի նա կարող է ստանալ տեղեկատվություն, իրեն հասանելի ծառայությունների և հնարավորությունների մասին: Այժմ օդակայանում գտնվող բաժանորդները ստանում են կարճ հաղորդագրություններ ռուսմիլնգում իրենց հասանելի հնարավորությունների մասին:

Թվային ծառայություններ

Լայվ չաթի միջոցով սպասարկում

Անցած տարվա ամռանը թարմացվել է ընկերության պաշտոնական կայքում առցանց սպասարկման հարթակը: Հարթակն ավելի հարմար է սպասարկող անձնակազմի համար, քանի որ միասնական համակարգով է աշխատում և հավաքագրում է հայտերը, որոնք գալիս են կայքից և My Beeline Armenia հավելվածից:

Նոր անձնական գրասենյակ

Հաճախորդների համար (ֆիզիկական անձանց) լիովին թարմացվել է անձնական գրասենյակը Beeline Armenia պաշտոնական կայքում՝ թե՛ համակարգչից, և թե՛ սմարթֆոններից օգտվելիս: Նոր գրասենյակը ստացել է ավելի հարմարավետ դիզայն, տարբեր ծառայություններին բաժանորդագրվելու հնարավորություն (բջջային կապ, ֆիքսված հեռախոսակապ, ինտերնետ), հարազատների հեռախոսահամարներն լիցքավորելու հնարավորություն, բանկային քարտ կցելու հնարավորություն՝ արագ լիցքավորում կատարելու համար, վերծանում ստանալու ավելի հարմար տարբերակներ, ինչպես նաև տարբեր ծառայությունները կարգավորելու հնարավորություն:

MobileID ծառայություն

Mobile ID ծառայությունն արդյունավետ գործիք է՝ հեռախոսի միջոցով անձի նույնականացման և էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթերի վավերացման համար: Ծառայությունը հասանելի է ամենուրեք և թույլ է տալիս օգտատիրոջն արագ ստորագրել էլեկտրոնային փաստաթղթերը: Ծառայությունը նվազեցնում է պետական կառույցներ այցելելու անհրաժեշտությունը: Այն թույլ է տալիս գործառույթներ իրականացնել առցանց, ապահովելով անձնական տվյալների պաշտպանությունը:


MOBILE ID

Մի փոքր ավելի ուշ նույն ծառայությունը գործարկվել է նաև կորպորատիվ հաճախորդների համար, ինչը թույլ է տալիս շատ հեշտացնել ընկերության կողմից թղթաբանական հարցերի լուծումը:



Առցանց խանութի թարմացում

Աշնանը գործարկել ենք թարմացված առցանց խանութը, որն ունի ավելի ճկուն գործիքակազմ, հարմար և պարզ դիզայն և պահեստի հետ առցանց ինտեգրում: Այժմ մեր հաճախորդները կարող են հեշտությամբ գտնել, ուսումնասիրել, համեմատել և ընտրել նոր սմարթֆոն: Նաև հեշտությամբ հնարավոր է հայտ ուղարկել՝ վարկ և բաժանորդագրում ձևակերպելու համար, ինչպես նաև վճարել առցանց, կամ ապրանքը ստանալիս:



Թարմացվել և ավելի հարմարավետ է դարձել հեռախոսահամարների վաճառքի բաժինը, որը նույնպես միացված է պահեստի հետ և թույլ է տալիս հեշտությամբ ընտրել և գնել ցանկալի համարը:



Հաճախորդների սպասարկում

Զանգերի կենտրոնի աշխատանքը բարելավելու նպատակով արվել են մի շարք նորամուծություններ, որոնք զգալիորեն կրճատել են Կոնտակտային կենտրոնի աշխատակիցների կողմից մեկ բաժանորդի սպասարկման ժամանակը՝

1 «Օնլայն խորհրդատու» ծառայությունն արդեն մատուցվում է նոր համակարգի միջոցով, որն իր գունեղ դիզայնով և օգտագործման համար մատչելի ինտերֆեյսով դարձել է ավելի գրավիչ բաժանորդների համար: Ընդգրկելով իր մեջ մի շարք հետաքրքիր և օգտակար ֆունկցիաներ՝ նոր համակարգը պարզեցրել է սպասարկող աշխատակիցների առօրյա աշխատանքը՝ բարելավելով նրանց արդյունավետության ցուցանիշները:

2 Մշակվել և ներդրվել է նոր հարթակ, որտեղ Կոնտակտային կենտրոնի աշխատակիցները կարող են տեսնել բոլոր այն սահմանափակումները, որոնք որևէ ազդեցություն ունեն կամ ունեցել են մատուցվող ծառայությունների որակի վրա:



3 Ներդրվել է մեկ այլ ծրագիր, որի շրջանակներում Կոնտակտային կենտրոնի սրահում տեղադրվել են էկրաններ, որոնց վրա արտացոլվում է Կոնտակտային կենտրոնի զանգահարող բաժանորդների քանակը և մասնագետին միանալու ժամանակահատվածը, ինչպես նաև Կոնտակտային կենտրոնի աշխատակիցների գործառնություն վերաբերվող վիճակագրական տվյալներ:



Հաճախորդների հետ հետադարձ կապ

Ի վերջո ընկերության աշխատանքի հիմնական նպատակը մեր բաժանորդների գոհունակությունն է: Այս ցուցանիշը բարձրացնելու նպատակով 2019 թ-ին իրականացվել են մի շարք տարատեսակ նախագծեր: Մասնավորապես՝

- Ընկերությունում ներդրվել է Bottom-up NPS համակարգը, որի շնորհիվ հարցումներ են անցկացվել 104.513 հաճախորդների շրջանում: Արդյունքում 17.736 հետադարձ կապ է հաստատվել և բաժանորդների խնդիրներին լուծումներ են տրվել՝ կարգավորումներ են կատարվել, փոխհատուցում է տրամադրվել և այլն: Այս տարվա հետադարձ կապի ցուցանիշը բավականին բարձր է համեմատած անցած տարիների: Այսպիսով՝ մենք կարողացել ենք ավելի շատ հաճախորդների օգնել:
- Տարվա ընթացքում կազմակերպվել է չորս «Հաճախորդի օր», որոնց ընթացքում վարչական գրասենյակում

աշխատող մենեջերներն այցելել են սպասարկման գրասենյակներ և աշխատել են հաճախորդների հետ: Ստացված հետադարձ կապի արդյունքում լուծվել են բազմաթիվ օպերատիվ խնդիրներ՝ սպասարկման գրասենյակների կահավորումից մինչև ծառայությունների որակի բարելավում: ■ Ընկերության սպասարկման ոլորտում ներգրավված աշխատակիցների համար անցկացվել են բազմաթիվ թրեյնինգներ՝ նրանց մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով: Պատրաստվում ենք շարունակել թրեյնինգները նաև 2020 թվականին:



Կոմպլաենս և Էթիկա

«ՎԵՈՆ Արմենիա»-ն՝ լինելով ՎԵՈՆ միջազգային խմբի մաս, ձգտում է համապատասխանել էթիկայի բարձրագույն չափանիշներին իր գործունեության բոլոր ուղղություններով՝ թե ներքին աշխատանքում, թե գործընկերների հետ հարաբերություններում:

Երևանում և մարզերում 70 հանդիպում-թրեյնինգ է կազմակերպվել աշխատակիցների համար: Ամբողջ աշխատակազմի համար հինգ առցանց թրեյնինգ է անցկացվել՝ կոմպլայենսի ընդհանուր թեմաների վերաբերյալ: Բոլոր այն աշխատակիցները, որոնք չեն կարողացել առցանց դասընթացն անցնել, ունեցել են անձնական հանդիպումներ մասնագետների հետ:

Միջազգային էթիկայի օրվա կապակցությամբ ընկերությունում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ հարցումներ, թեմատիկ ֆիլմի դիտում և այլն, ինչպես նաև տեղեկատվական հաղորդագրություններ են ուղարկվել գործընկեր կազմակերպություններին՝ VEON խմբի ընկերություններում գործող կոմպլայենսի կանոնների վերաբերյալ:

Վեց աշխատակիցներ 2019-ի ընթացքում մրցանակներ ստացան՝ կոմպլայենսի և



էթիկայի արժեքներին նվիրվածության համար, ևս մեկ աշխատակից 2019 թ. իր աշխատանքի արդյունքներով պարգև ստացավ խմբի գլխամասից Ամստերդամում:

2019 թ. ընթացքում էթիկայի և կոմպլայենսի հարցերին նվիրված երեք մեծ կորպորատիվ հանդիպումներ են կազմակերպվել Հայաստանում Beeline-ի վարչական շենքում՝ գլխավոր տնօրենի մասնակցությամբ:

22 ոչ պաշտոնական հանդիպում-քննարկում է կազմակերպվել ընկերության բարձրագույն ղեկավարության համար՝ կոմպլայենսի և էթիկայի տարբեր հարցերի վերաբերյալ:

Ընկերությունում պահպանվում և զարգացվում է SpeakUp՝ խնդիրների մասին կոմպլայենսի պատասխանատուներին տեղեկացնելու մշակույթը, էթիկային հակասող ցանկացած գործողություններից խուսափելու համար:



Հնարավորություններ աշխատակիցների համար

Հայաստանում Beeline-ը մշտապես ձգտում է լավագույն պայմաններն ապահովել իր աշխատակիցների համար՝ նպաստելով նրանց զարգացմանն ու կարիերայի աճին:

Սոցիալական փաթեթ

- Ընկերության բոլոր աշխատակիցներին տրամադրվում է բժշկական ապահովագրության փաթեթ, որում ներառված է 4 տեսակի ծածկույթ, այդ թվում արտասահմանյան ուղևորությունների ընթացքում ապահովագրությունը:
- Ընկերության աշխատակիցներին տրամադրվում է բջջային հեռախոսակապ, հատուկ զեղչային համակարգ ընկերության կողմից մատուցվող որոշ ծառայությունների և սարքավորումների համար:
- Աշխատակիցներն օգտվում են նաև տարբեր կազմակերպությունների կողմից ընկերությանն առաջարկվող կորպորատիվ զեղչերից:

Նյութական և ոչ նյութական խրախուսման համակարգ

- Գործում է կորպորատիվ պարգևաձևարների և պարգևատրումների համակարգ, որը միտված է խրախուսելու լավագույն աշխատակիցներին, որոնք

ցուցաբերում են լավ արդյունք, առաջնորդվում են կորպորատիվ արժեքներով, հանդես են գալիս նոր գաղափարներով և դրսևորում էթիկական վարվելակերպ:

- Վերապատրաստման լայն հնարավորություններ՝ ներառյալ անվճար մասնագիտական ուսումնական հարթակներ, որոնք տրամադրվում են վկայագրեր:

Աշխատանքային մթնոլորտ և կորպորատիվ մշակույթ

- Ընկերությունն առաջնորդվում է հինգ արժեքներով՝

Հաճախորդին նվիրված

Նախաձեռնող

Նորարար

Համագործակցող

Ազնիվ

Customer-obsessed, Entrepreneurial, Innovative, Collaborative, Truthful

Արժեքների հիման վրա իրականացվում են Ընկերության աշխատակիցների պարգևատրման, ինչպես նաև նոր աշխատակիցների ընտրության գործընթացները:

- Ընկերությունում գործում է ներքին կորպորատիվ ցանց, որտեղ հրապարակվում են ամենօրյա նորություններն ու ընկերության տարբեր իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Ինչպես նաև գործում է ներքին հաղորդակցման Telegram ալիք: Տեսակապի միջոցով եռամսյակը մեկ կազմակերպվում են հարց ու պատասխան ձևաչափով հանդիպումներ ընկերության ղեկավարների մասնակցությամբ, որի ընթացքում վերջիններիս կողմից ներկայացվում են ընկերության ենթակառուցվածքների ընթացիկ աշխատանքային արդյունքները:
- Պարբերաբար անցկացվում են ներքին հարցումներ, որոնց շնորհիվ աշխատակիցների հետադարձ կապի հիման վրա իրականացվում են ընկերության գործընթացները կատարելագործելու ուղղված նոր նախագծեր:
- Ընկերությունում գործում են աշխատանքային հավասար պայմաններ՝ բոլոր աշխատակիցները, ղեկավարները, այդ թվում և գլխավոր տնօրենը իրենց աշխատանքը կատարում են բաց՝ Open Space ֆորմատով գրասենյակային տարածքներում:
- Այն մասնագետներն, ում ներկայությունը գրասենյակում անհրաժեշտ չէ աշխատանքային գործընթացն անխափան ապահովելու համար, հնարավորություն ունեն աշխատելու հեռավար՝ BeFree ռազմավարության շրջանակում:
- Ընկերությունում գործում է Վարվելակերպի կանոնակարգ և

խրախուսվում է էթիկական մշակույթ, կա թեժ գիծ՝ կարգազանցությունների և էթիկայի կանոնների խախտումների մասին հայտնելու համար:

- Ընկերությունում խրախուսվում է նոր գիտելիքներ ստանալու և զարգանալու աշխատակիցների ձգտումը: Հենց այդ նպատակով ստեղծված են լայն հնարավորություններ ընկերության ներսում փորձի փոխանակման, ուսումնական դասընթացներ անցնելու համար: Մասնավորապես, Beeline կորպորատիվ համալսարանը կազմակերպում է դասընթացներ ներքին և արտաքին փորձագետների հետ: Ցանկացած աշխատակից ինքն էլ կարող է համապատասխան վերապատրաստումից հետո իր գիտելիքներով և հմտություններով կիսվել գործընկերների հետ հատուկ գործող ակումբների շրջանակում կամ այլ ձևաչափով:

Beeline համալսարանն առաջարկում է աշխատակիցներին զարգացման գործիքների լայն ընտրանի: Ներդրվել է VEON LEARNING ինքնազարգացման հարթակ՝ առցանց կրթական ռեսուրսներով՝ LinkedIn, Coursera, WebTutor, Webinar.ru: Ընդհանուր առմամբ 2019-ին աշխատակիցների առնվազն 30%-ը մասնակցել է զարգացմանն ուղղված տարատեսակ միջոցառումներին:

- Ընկերությունը խրախուսում է աշխատակիցների կարիերային աճը: Ընկերության ղեկավարների մեծ մասը կարիերան սկսել է հենց այստեղ՝ հասարակ մասնագետի պաշտոնից: Ներկա պահին ընկերությունը ղեկավարող 12 մենեջերներից 10-ն իրենց կարիերան սկսել են որպես մասնագետ:
- Բոլոր աշխատակիցները կամավոր սկզբունքով կարող են միանալ ընկերության սոցիալական նախագծերին, որոնց թվում են շաբաթօրյակները, անապահով ընտանիքներին տրամադրվող աջակցությունը, և փորձի փոխանակման միջոցառումները: 2019 թ-ին «Բարի գործեր» նախաձեռնության շրջանակում ընկերության աշխատակիցներն օգնեցին տասնյակ ընտանիքների:
- Աշխատավայրում բարենպաստ մթնոլորտ ապահովելու համար ընկերությունում յուրաքանչյուր հարկում ստեղծված են խոհանոցներ և հանգստի գոտիներ, ինչպես նաև գործում են ճաշարան և սրճարան, որտեղ աշխատակիցների համար գործում են հատուկ գներ:
- Ընկերությունում կան ավանդույթներ և հետաքրքիր կորպորատիվ կյանք՝ միջոցառումներով, հավաքույթներով, թիմային խաղերով և արկածներով հագեցած:
- Ընկերությունում գործում է Կապի թանգարանը, որն ընդունում է այցելուների յուրաքանչյուր ուրբաթ, կա նաև 360 աստիճան մեթոդով վիրտուալ այցելության հնարավորություն:
- Ընկերությունը նաև բազմաթիվ միջոցառումներ է իրականացնում

աշխատակիցների և նրանց երեխաների համար՝ այդ թվում սպորտային և ինտելեկտուալ (օրինակ՝ գործում է «Ինչ, Որտե՞ղ, Ե՞րբ»-ի թիմ), յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթն երեխաների օր է, երբ աշխատակիցների երեխաները կարող են այցելել իրենց ծնողների աշխատավայրը:

Երրորդ սերունդ 3G

Որպես սոցիալապես պատասխանատու և Հայաստանում խոշորագույն գործատու Beeline-ն իրականացնում է «Երրորդ սերունդ» ստաժավորման ծրագիրը: «Երրորդ սերունդ» ծրագիրը մեկնարկել է 2008 թ-ին, և այս ընթացքում Beeline-ում ստաժավորում է անցել 160 ուսանող:



«3-րդ սերունդ» ստաժավորում

Նրանցից ավելի քան կեսն այսօր Beeline-ի աշխատակիցներ են, շատերը առանցքային պաշտոններ են զբաղեցնում: Ավելին, ծրագրի մասնակիցներից մեկը այժմ աշխատում է խմբի ընկերություններից մեկում՝ Ուկրաինայում:


Digithon

Սեպտեմբերին Beeline-ն իր աշխատակիցների համար անցկացրեց հերթական Digithon 2019-ը:



Digithon-ի շրջանակում Beeline-ի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցները ստեղծում են նորարարական թվային ծառայությունների նախատիպեր: Այս տարի կորպորատիվ թվային մարաթոնի հայաստանյան փուլում մասնակցեց 5 թիմ: Որպես Digithon 2019-ի թեմա ընտրվել էր «Մեծ տվյալներ և հաճախորդների արժեքի կառավարում»-ը, որը հեռահաղորդակցության ոլորտի արդիական թեմաներից է: Աշխարհում հայտնի hackathon-ների նման, Digithon-ը տևում է 24 ժամ: Այդ ընթացքում թիմերը մշակում են իրենց լուծումների նախատիպերը և ներկայացնում ժյուրիին: Այս տարի հանձնաժողովի կազմում Beeline-ի ղեկավարներն էին, իսկ նախագահը՝ ընկերության գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը: Հայաստանյան փուլի հաղթողներն

այնուհետև մասնակցեցին ՎԵՈՆ խմբի գլոբալ Digithon 2019-ին Ամստերդամում: Հայաստանյան հաղթող թիմի մասնակիցներից մեկը հաղթեց Նաև Գլոբալ Digithon-2019-ը:



Կորպորատիվ պատասխանատվություն

Հայաստանում Beeline-ը հավատարիմ է սոցիալական պատասխանատվության լավագույն ավանդույթներին և մշտապես իր ներդրումն է կատարում Հայաստանի տնտեսական զարգացման գործում:

Հայաստանում Beeline-ի կորպորատիվ պատասխանատվության (CR) նախագծերն իրականացվում են երկու հիմնական ուղղություններով՝ *Make your Mark* (Թող քո հետքը) և *Digital Skills and Literacy* (Թվային գիտելիքներ և հմտություններ), որոնք հիմնված են ՄԱԿ-ի գլոբալ զարգացման ռազմավարական նպատակներից երկուսի վրա՝ որակյալ կրթություն բոլորի համար և արդյունավետ տնտեսական զարգացում:

«Թող քո հետքը» գլոբալ ռազմավարության նպատակն է սատարել Հայաստանում ստարտափների զարգացմանն ու շուկայում նրանց հաստատմանը: Գաղափարն այն է, որ երիտասարդներին տրամադրվի բիզնես կրթություն և աշխատանքային հարթակ, որպեսզի նրանք՝ օգտագործելով ստացված գիտելիքներն ու հմտությունները, կառուցեն իրենց ապագան:

Beeline ստարտափ ինկուբատոր՝ Հայաստանի բիզնես հրեշտակների ցանցի (BANA) հետ

2018 թ-ից ի վեր իրականացվող այս նախագիծն արդեն պարզապես նախագիծ չէ, այլ Հայաստանի ստարտափ էկոհամակարգի լիիրավ անդամ: 2019 թ-ին 3-5-րդ շրջափուլերի ընթացքում ինկուբատորն ընդունել է ավելի քան 15 ստարտափ, որոնցից 4-ը ստացել են ներդրումներ հրեշտակ ներդրողներից:

Beeline ստարտափ ինկուբատորի առաքելությունը հայաստանյան ստարտափներին հաջողության ճանապարհին աջակցելն է: Նրանք



ստանում են իրենց անհրաժեշտ բոլոր գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև օգտվում են BANA-ին մասնակցող հրեշտակ ներդրողների խորհրդատվությունից և բիզնես կապերից, շատերն արդեն հաջողությամբ գործում են հայաստանյան և/կամ միջազգային շուկայում:

“Սա ամենաակտիվ հարթակներից մեկն է, եթե դուք հետաքրքրված եք նոր և հաջողակ

ստարտափների մասին տեղեկություններով, ինչպես նաև այն միջոցառումներով և մարդկանցով, որոնք կարող են ձեզ օգնել սկսել ձեր բիզնեսը Հայաստանում”

Արեգ Վարդանյան, ForgeFiction-ի համահիմնադիր

“Հենց առաջին հայացքից երևում էր, որ Beeline ստարտափ

ինկուբատորը կարող է օգնել մեր ստարտափի վաճառքները մեծացնելու հարցում: Այժմ, երբ հետ ենք նայում, հասկանում ենք, որ այն մեզ օգնեց ոչ միայն վաճառքներում, այլ նաև իրավաբանական, հաշվապահական և ֆինանսական հարցերի լուծման հետ: Co-working տարածքում միշտ շատ էնտուզիազմով լի մարդիկ կան, որվքեր գիշեր և ցերեկ աշխատում են իրենց հիանալի նախագծերի վրա, և սա լրացուցիչ մոտիվացիա է տալիս: Հազարավոր ինկուբատորներ ամբողջ աշխարհում ստարտափներին գնահատում են՝ ելնելով իրենց կողմից ընթերցված գրքերից, իսկ Beeline ինկուբատորում աշխատում են գիտակ, իրական փորձ ունեցող և պրակտիկ գիտելիքների տիրապետող մասնագետներ, որոնք օգնում են մեզ նման չմշակված ադամանդներին փայլել երկնքում”

Արման Սարգսյան,
RendChain-ի գործադիր տնօրեն

“Այս 14 շաբաթների ընթացքում մեր թիմը հնարավորություն ունեցավ մասնակցելու Beeline ստարտափ ինկուբատորի և Հայաստանի բիզնես


հրեշտակների ցանցի (BANA) կողմից կազմակերպած մի շարք միջոցառումներին: Տարբեր ոլորտների փորձագետներ պատասխանեցին մեր հարցերին, խորհուրդներ տվեցին մեզ, կիսվեցին իրենց փորձով և իրենց հետ կապ պահելու հնարավորություն տվեցին: Ինկուբատորի թիմը մեզ օգնեց մեր pitch deck-ի մշակման հարցում և ներկայացրեց պոտենցիալ ներդրողներին: Նրանց աջակցության և BANA-ի մեծ կապերի շնորհիվ մենք արդեն ստացել ենք \$51.000 ներդրում”

Լևոն Գալստյան, 4u.am-ի գործադիր տնօրեն

StartHub՝ Տեխնոլոգիական զարգացման կենտրոնի հետ

«ՍտարտՀաբ» (StartHub.am) հարթակը ստեղծվել է «Տեխնոլոգիական զարգացման կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ՝ ստարտափներին հնարավոր տեղեկատվական աջակցություն տրամադրելու համար: Մեկ տարվա գործունեության ընթացքում հարթակը հրապարակել է Հայաստանում ստարտափ հիմնելու ուղեցույցներ,

աջակցություն տրամադրող կազմակերպությունների մասին տեղեկատվություն, ինչպես նաև նորություններ ստարտափների մասին և հարցազրույցներ հայկական ստարտափների ներկայացուցիչների հետ: Հարթակը մշտապես թարմացվում է, տրամադրելով ստարտափներին կարևոր տեղեկություններ տարբեր հնարավորությունների, մրցույթների, ներդրումային հիմնադրամների մասին և այլն: Զուգահեռ իրականացվել է ՍտարտՀաբ ՕՖլայն հանդիպումների շարքը, որին մասնակցել են Հայաստանի ստարտափ էկոհամակարգի ազդեցիկ ներկայացուցիչները և քննարկել են ոլորտի արդիական խնդիրները: Նախագիծը շարունակվել է 2020 թ-ին:



Սևան Ստարտափ Սամմիթ՝ «Ստարտափ Արմենիա» հիմնադրամի հետ

Չորս տարի անընդմեջ Սևանի ափին տեղի է ունեցել Սևան Ստարտափ Սամմիթը, որի նպատակն է մի տեղում և ոչ պաշտոնական միջավայրում հավաքել ստարտափներին Հայաստանից և այլ երկրներից, ինչպես նաև մենթորների, փորձառու բիզնեսմենների և ներդրողների՝ փորձով փոխանակվելու, կապեր հաստատելու և ակտիվ ժամանց ունենալու:

Beeline-ը՝ որպես Հայաստանի ստարտափ էկոհամակարգի ակտիվ մասնակից և ստարտափներին աջակցություն տրամադրող ընկերություն կրկին դարձել էր սամմիթի ռազմավարական աջակիցը: Ընկերության աշխատակիցներն էլ են ակտիվ մասնակցություն ունեցել սամմիթի թե՛ կազմակերպման ընթացքին, թե՛ անցկացմանը: Այդ թվում և գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը, ինչպես նաև Beeline ստարտափ ինկուբատորի հետ համագործակցող փորձագետները հանդիպել են մասնակից թիմերին ու իրենց խորհուրդներով են կիսվել նրանց հետ: Ակտիվ մասնակցություն են ունեցել միջոցառումներին նաև Beeline ստարտափ ինկուբատորի աշխատակազմը և մասնակից ստարտափները:



Սևան Ստարտափ Սամմիթ 2019-ը թվերով՝

Ընդհանուր մասնակիցներ՝ **10 000**

Մասնակցող ստարտափ թիմեր՝ **120**

Մրցանակային ֆոնդ՝ **100 000 ԱՄՆ դոլլար**

Ներդրումային ֆոնդ՝ **100 000 ԱՄՆ դոլլար**

Ներկայացված երկրներ՝ **50**

Տվյալագիտության ամառային դպրոց՝ Հայաստանի Ամերիկյան համալսարանի հետ

2019 թ. հուլիսին Հայաստանի Ամերիկյան համալսարանում կազմակերպվեց «Տվյալագիտության ամառային դպրոց», որը մասնակիցներին եզակի հնարավորություն տվեց սովորելու տվյալագիտության հիմունքներն ու մեթոդները՝ մտածողությունը զարգացնող մի շարք դասընթացների միջոցով: Ամառային դպրոցին մասնակցել են տարբեր ոլորտները ներկայացնող 70-ից ավելի մասնակիցներ՝ այդ թվում ուսանողներ և աշխատող մասնագետներ:

Հայաստանից և արտերկրից: Դասավանդողների թվում էին շուրջ երկու տասնյակ տեղացի և միջազգային առաջատար մասնագետներ: Ուսանողները ստացել են տվյալագիտության ոլորտում կիրառվող հմտություններ, ուսումնասիրել են Python ծրագրավորման լեզուն, մեքենայական ուսուցման հիմունքները, համակարգչի կողմից մարդու խոսքն ընկալելու մեխանիզմները և ստացել են տվյալագիտության ոլորտի արդիական այլ գիտելիքներ, որոնք թույլ կտան մասնակիցներին առաջ գնալ ոլորտում մասնագիտական առումով:

Ծրագրի ավարտին մասնակիցները բաժանվել են խմբերի և մասնակցել մրցույթի, իսկ լավագույն երեք գաղափարների հեղինակ թիվերը ստացել են դրամական պարգևներ:



ՆերՈւժ սփյուռքի տեխնոլոգիական ստարտափների ծրագիր

2019 թ. ավարտին Հայաստանում Beeline-ը և Beeline ստարտափ ինկուբատորը Հայաստանի ստարտափ էկոհամակարգի գրեթե բոլոր ներկայացուցիչների հետ միասին միացել են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից իրականացվող ՆերՈւժ ծրագրին: «ՆերՈւժ» 2019-ին մասնակցում էին 17 երկրից ընտրված 47 տեխնոլոգիական ստարտափների 80 ներկայացուցիչներ: «ՆերՈւժ» ծրագրի հիմնական նպատակն

Թվային գիտելիքներ և հմտություններ (Digital Skills and Literacy) ուղղության շրջանակում Beeline-ն իր աջակցությունն է ցույց տալիս հայ երիտասարդներին ժամանակակից թվային գիտելիքներ ձեռք բերելու հարցում, որոնք օգտակար կլինեն նրանց հետագա ուսման և աշխատանքային գործունեության մեջ և թույլ կտան նրանց ապագան դարձնել ավելի լավ:




է՝ Սփյուռքից տաղանդավոր ձեռներեցների, ինժեներների ներգրավումը, հայրենադարձության խթանումը, ինչպես նաև Հայաստանում ստարտափ էկոհամակարգի զարգացումը: Ծրագիրը հնարավորություն է ստեղծելու արտերկրում ապրող հայերի տեխնոլոգիական գաղափարները և նախագծերը Հայաստանում բիզնեսի վերածելու և գլոբալ շուկաներ դուրս գալու համար:

Ի դեպ, Beeline ստարտափ ինկուբատորի ռեզիդենտ ստարտափներից երեքը՝ Rendchain-ը, Garoon Tech-ը և GuideMe-ն, որոնց թիվերում կան սփյուռքահայ անդամներ, «ՆերՈւժ»-ի լավագույն ֆինալիստների շարքում էին: Garoon Tech-ն արժանացավ 2-րդ մրցանակի և հովանավորների կողմից այլ նվերների:



**TechWorkshops`
Թումո ստեղծարար
տեխնոլոգիաների
կենտրոնի հետ**



Թումոյի հետ համատեղ իրականացվող նախագծի շրջանակում Հայաստան էին հրավիրվում առաջատար մասնագետներ արտասահմանից, ովքեր երկու շաբաթվա ընթացքում կենտրոնի սաներին փոխանցում էին իրենց գիտելիքները՝ թվային աշխատանքների տարբեր

ուղղություններով:
Reinforcement Learning-ի աշխատարանը 2019 թ-ին վարեց աշխարհով մեկ տարածում գտած Airbnb հարթակի ծրագրավորող Նիտարշան Ռաջկումարը: Reinforcement Learning-ը արհեստական բանականության, համակարգչային գիտության և հոգեբանության խաչմերուկում գտնվող ոլորտ է և զբաղվում է համակարգչի՝ արտաքին աշխարհի հետ փոխազդեցությամբ և դրանից փորձառության ձեռքբերմամբ:
Աշխատարանի նպատակը ուսանողներին Reinforcement Learning-ի մասին տեսական և գործնական գիտելիքներ փոխանցելն էր: Դրա արդյունքում ուսանողները սովորեցին համակարգչային խաղերի համար գրել ամենաժամանակակից ալգորիթմներ:



Նշված հմտությունների շնորհիվ նրանք կկարողանան շարունակել այս առաջադեմ ոլորտում հաջողություններ ունենալ:
Խորվաթ ճարտարագետ Լուկա Պիսկորեցը վարեց գեներատիվ մոդելների կառուցման աշխատարան, որի ընթացքում Թումո ուսանողները, օգտագործելով Python ծրագրավորման լեզվի գեներացնող ալգորիթմները, ստեղծում էին 3D կառուցվածքներ Rhino ծրագրում:
Աալտո համալսարանի գիտությունների թեկնածու ու ճարտարապետ Աշիշ Մոհիտեի աշխատարանում մասնակիցները ծրագրավորեցին 3D տպիչը Arduino-ում, որից հետո իրենց սեփական տպիչը հավաքեցին առանձին դետալներից:

Իսկ Սքոթ Նազարյանի աշխատարանում Թումո ուսանողները հայկական Սփյուռքի համար կարևոր նշանակություն ունեցող վայրեր ընտրեցին և ստեղծեցին միջավայր վիրտուալ իրականությունում՝ հայերին վիրտուալ ընթրիքի շուրջ միավորելու համար:
Պիսկորեցի, Մոհիտեի և Նազարյանի հետ դասընթացի արդյունքում ուսանողներն աշխատեցին վիրտուալ իրականության, եռաչափ մոդելավորման և տպագրության նախագծերի վրա: Աշխատարանների վերջում՝ հուլիսի 12-ին, Թումո երևանում տեղի ունեցավ արդյունքների ցուցադրություն:

Թվային հնարավորություններ՝ դպրոցականներին – Մանկական զարգացման հիմնադրամի նետ

2019 թվականի ընթացքում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ Հայաստանում Beeline-ը և Մանկական զարգացման հիմնադրամը նպատակ դրեցին հեշտացնել մարզերում բնակվող երեխաների ուսուցման գործընթացը՝ նրանց տրամադրելով գիտելիքներ՝ կապված տարբեր թվային գործիքների հետ: Չորս մարզերի՝ Արմավիրի,

Արարատի, Վայոց Ձորի և Կոտայքի ավագ դպրոցների շուրջ հարյուր աշակերտներ սովորեցին օգտվել Google AutoDraw, Goo.gl, Google Drive, Google Documents, Google Slides, Google Sheets, SafeSearch, ինչպես նաև Storymap JS, Thinglink, Readymag, Canva ծրագրերից և գործիքներից:



13-16 տարեկան երիտասարդների հետ հինգ ամսվա ընթացքում աշխատել են ՏՏ ոլորտի առաջատար մասնագետներ, ովքեր սովորեցրել են օգտվել թվային գործիքներից՝ դարձնելով հեռախոսը և համակարգիչն արդյունավետ միջոց ուսման և աշխատանքի համար: Մասնակիցների միջև անցկացված

մրցույթի և փորձագետների հետ աշխատանքի արդյունքում ստեղծվել է ուղեցույց, որը փոխանցվել է ԿԳՄՍ նախարարությանը, որպեսզի ՀՀ բոլոր դպրոցների երեխաներն ու ուսուցիչները կարողանան ինքնուրույն յուրացնել նշված ծրագրերը և օգտագործել դրանք առօրյա ուսման մեջ:



Կրթական ծրագրեր՝ Գաֆեսճեան արվեստի կենտրոնի հետ

2018-2019 թթ-ին շարունակվել է Նաս Beeline-ի և Գաֆեսճեան արվեստների կենտրոնի հետ ավանդական համագործակցությունը: Իրականացված տաս նախագծին տարվա ընթացքում մասնակցել են շուրջ 1200 երեխաներ և պատանիներ:

Նախագծերի թվում են երեխաների կողմից արդեն շատ սիրված «Ամանորն ու Սուրբ ծննդյան հրաշքը»:

«Ստեղծիր քո շրջայցը» նախագիծը, որի շրջանակում մասնակիցները

հնարավորություն են ստացել իրենց համար ցանկալի և արկածներով լի շրջայցը կազմակերպել և անցնել արվեստի կենտրոնում:

«ԴիզայնԼաբ.աթոռներ» կրթական ծրագրի շրջանակում մասնակիցները նախագծեցին իրենց սեփական աթոռները:



Երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ երեխաները մասնակցեցին թանգարանի 10-ամյակի ֆլեշմոբին և «Քո դրոշակը» ստեղծագործական ծրագրին:

Շարունակվել է «Երաժշտական գրոսանքներ» նախագիծը, որի շրջանակում երեխաները ինտերակտիվ ձևաչափով ծանոթացել են դասական երաժշտության հետ:



Գաֆեսճեան պատանեկան խորհրդի «Արվեստանոց» լուսանկարչական նախագծի մասնակիցների աշխատանքները ցուցադրվել են Դիլիջանում, Գյումրիում և Եղեգնաձորում:

Պատանի արվեստագետների հարթակը ստեղծվել է պատանեկան խորհրդի նախաձեռնությամբ, և նպատակը երիտասարդների արվեստը ներկայացնելն է:



Դասախոսություններ և վարպետության դասեր

Որպես կորպորատիվ պատասխանատվության մաս ընկերության աշխատակիցները պարբերաբար դասախոսություններ և վարպետության դասեր են անցկացնում ցանկացողների համար, մասնավորապես գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը, PR ղեկավար Նաիրա Նազարյանը և այլք: Օրինակ՝ հանդիպումներ են կազմակերպվել PR դպրոցի, Առաջնորդության դպրոցի սաների, ԵՊՀ ուսանողների և շրջանավարտների, Երիտասարդ առաջնորդների միջազգային դպրոցի ուսանողների, ինչպես նաև Beeline ստարտափ ինկուբատորի ընդդիմացիների համար:



PR Մրցանակաբաշխություն

Հայաստանում Beeline-ն արդեն չորրորդ անգամ միացավ Հայկական PR մրցանակաբաշխությանը, որն իրականացվում է «Հայկական Փի Ար ասոցիացիա» գիտատեղեկատվական ՀԿ-ի նախաձեռնությամբ:



Մրցանակաբաշխության նպատակն է արձանագրել հանրային կապերի ոլորտի ձեռքբերումները, հնարավորինս զարգացնել և հանրայնացնել Հայաստանում գրագետ հաղորդակցության մշակույթի կարևորությունը, նպաստել PR մասնագետների ակտիվ դերակատարությանը քաղաքական-հասարակական գործընթացներում, հանրային կյանքում:

PR մրցանակաբաշխության արդյունքները հիմնված են գիտական ուսումնասիրության վրա. հարցումներ են անցկացվում թիրախային խմբերի՝ PR փորձագետների, ԶԼՄ ներկայացուցիչների հետ, կանոնավոր մշտադիտարկման են ենթարկվում գերատեսչությունների աշխատանքն ու պետական, քաղաքական, հանրային գործիչների գործունեությունը:



Շրջակա միջավայր

Beeline-ն իր սոցիալական պատասխանատվության մաս է համարում նաև շրջակա միջավայրի պաշտպանությունը: 2019 թ-ին ընկերությունը՝ աշխատակիցների ակտիվ ներգրավվածությամբ միացել է **Մոլորակի ժամ** համաշխարհային ակցիային, որի շրջանակում մարտի 26-ին ընկերության գլխամասում և որոշ գրասենյակներում էլեկտրաէներգիան անջատվել էր 1 ժամով՝ այն խնայելու և շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունքի կարևորության մասին ևս մեկ անգամ հիշեցնելու նպատակով:





«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ

Հասարակայնության հետ

կապերի ծառայություն

Նաիրա Նազարյան

Անժելա Ալեքյան

Գրիգորի Յուրին

pr@beeline.am

+37410 29 05 14

ՀՀ, Երևան, Ազատության պողոտա 24/1